791

203.1
U-45

1898

B 2001

2010

Հրատարակ. Կովկ. գրվճ. Զաք. Գրիգորեանց.

# ԱՂՕԹՔՆԵՐ

## ԴԱՆԻԷԼ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԸ և

ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ԺՈՂՈՎԱԼՈՒՅԻ ԵՐԳՆ։

Ժողովեց Զ. Գրիգորեանց.

# МОЛИТВЫ,

книга пророка Даніеля и пѣснопѣніе святого Рожд. празд.

**Собралъ З. Григорянцъ.**

ТИФЛИСЪ.

Тип. А. Меликъ Шахназарова, Пушк. ул.

1898

203.1
Ч-46

2580
38

«ԿՈՎԿԱՍԵԱՆ ԴՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻ»

Զաք. Գրիգորեանցի հրատարակութիւնները.

| | | Ռ. Կ. |
|---|---|---|
| 1. | Ա. Մ. Ե. Գ. – Դիւցազունք ըստ Խորենացւոյ՝ Հայկ, Արամ, Վահագն. պատկերներ պատմական կեանքից | — 30 |
| 2. | Գօլգոթայերեալ [մանկական թատրոն] կատակերգութիւն 2 արարուած. թարգմ. Նազարեանց Ցո. | — 20 |
| 3. | Գամառ-Քաթիպան մանկական ոտանաւորներ և երգեր | — 20 |
| 4. | Երզնկեանց Եղնիկ քահ. – Զայնագրեալ մանկական երգարան՝ երգեր և պար հրաման՝ ի հրահանգ և ի պէտս հոգեւոր դպրոց. Հայոց | — 40 |
| 5. | — Զայնագրեալ ազգային երգարան հայ դարձցեալների համար | — 80 |
| 6. | — Մասրական երգեր և պար-երգեր | — 20 |
| 7. | Ծերենց- Երկունք Թ. դարու | 1 — |
| 8. | — Թէոդորոս Ռշտունի | 1 — |
| 9. | — Թորոս Լեռնի | 1 — |
| 10. | Գրիգորեանց Զաք.—Քուր—տարրական նախապատրաստական բնական գիտութեան 11 պատկերներով | — 35 |
| 11. | — Բնագիտութիւն—Համառօտ դասընթաց բնական գիտութեանց 57 պատկերով | — 60 |
| 12. | — «Մանկութիւն» | 40 |

203.1
Ա-95
Ա

Հրատարակ. Կովկ. գրվճ. Զաք. Գրիգորեանց.

# ԱՂՕԹՔՆԵՐ

## ԴԱՆԻԷԼ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԸ և

## ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՄԲԱԳԵԼՈՒՅԻ ԵՐԳՆ։

Ժողովեց Զ. Գրիգորեանց.

186

# МОЛИТВЫ,

книга пророка Даніеля и пѣснопѣніе святого Рожд. праздн.

**Собралъ З. Григорянцъ.**

ТИФЛИСЪ.
Тип. А. Меликъ Шахназарова, Пушк. ул.
1898

Ա

30306-ԿՀ

Թոյլատրեալ գոլով տպագրութեան Աղօթագրոյս ի կողմանէ Նորին Ս. Օծութեան Տ. Տ. Մկրտչի ս. Կաթողիկոսի ամենայն Հայոց Դիւանս վաւերացուցանէ զայս ստորագրութեամբ եւ դրոշմամբ դիւանական կնքոյ։ 13 մարտի 1898 ամի ի ս. Էջմիածին ի տեղի դիւանապետի Կորիւն-Վարդապետն.

Կ. Տ. № 247

Дозволено цензурою Тифлисъ, 14 го Марта 1898 г.

12964-58



Խաչ, օգնեա՛ ինձ։

Խաչ, օգնի՛ր ինձ։

Տէր, եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո։

Տէր, եթէ իմ շրթունքները բաց անես, իմ բերանը քեզ օրհնութիւններ կ'երգի։

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։ Ամէն։

Հօր, Որդու և Սուրբ Հոգու անունով։ Ամէն։

---

*Տէրունական աղօթք։*

Հայր մեր՝ որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո, եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո, որպէս յերկինս և յերկրի։ Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր և թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց։ Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի չարէ։ Զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս, ամէն։

*Տէրունական աղօթք։*

Մեր հայր, որ երկնքումն ես, սուրբ լինի՝ քո անունը, գայ՝ քո արքայութիւնը. քո կամքը լինի՝ ինչպէս երկնքումը, այնպէս էլ երկրիս վրայ։ Մեր ամենօրուայ հացը՝ այսօր էլ մեզ տուր և ներիր մեզ մեր պարտքերը, ինչպէս որ մենք էլ ներում ենք մեր պարտականներին։ Մի գցիր մեզ փորձութեան մէջ, այլ փրկիր մեզ չարիցը։ Որովհետև քոնն է արքայութիւնը, զօրութիւնը և փառքը յաւիտեանս ամէն։

---

Սիրտ սուրբ հաստատեա յիս Աստուած, և

Սուրբ սիրտ հաստատիր իմ մէջ, Աստուած, և ու-



հոգի ուղիղ նորոգեա՝ ի փորի իմում։

ղիղ հոգի նորոգիր իմ փորում։

---

*Ի դէմն Որդոյն Աստուծոյ։*

Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ. (կրկնս կրկնեա)։

*Աստուածորդուն ուղղուած։*

Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ որ մեզ համար խաչուեցիր, մեզ ողորմիր. (երեք անգամ կրկնիր)։

---

*Ժամամուտ յարութեան։*

Քրիստոս յարեաւ՝ ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգեւեաց նմա փառք յաւիտեանս ամէն։

Քրիստոս յարութիւն առաւ ննջեցեալների միջից, իր մահով—մահին յաղթեց և յարութիւն առնելովը մեզ կեանք պարգևեց. փառք նրան յաւիտեան, ամէն։

---

*Աղօթք առ սուրբ կոյսն։*

Փառաւորեալ և օրհնեալ միշտ սուրբ կոյս Աստուածածին Մարիամ,

*Աղօթք սուրբ կոյսին։*

Միշտ փառաւորուած և օրհնուած Քրիստոսի մայր սուրբ կոյս Մա-

մայր Քրիստոսի, մատ՝ զաղաչանս մեր Որդւոյ քո և Աստուծոյ մերոյ։ Փրկել զմեզ 'ի փորձութենէ և յամենայն վտանգից մերոց։

ըիամ Աստուածածին,— ներկայացրու մեր աղաչանքները քո որդուն և մեր Աստծուն որ փրկի մեզ փորձութիւնից և ամեն վտանգներից։

---

Մի ինկենուր զիս, տէր, յերեսաց քոց, և զհոգի սուրբ մի հաներ յինէն։

Աղօթք յառաջ քան զճաշելն։

Աչք ամենացուն ի քեզ տէր յուսան և դու տաս կերակուր նոցա ի ժամու։ Բանաս զձեռն քո և լցու ցանես զամենեսեան քաղցրութեամբ կամօք քովք։

Տէր, երեսիցդ մի գցիր ինձ և սուրբ հոգին ինձանից մի հանիր։

Աղօթք ճաշից առաջ։

Տէր, ամենքի աչքը քեզ վրայ է յոյս դրել և դու ես նրանց իր ժամանակին կերակուր տալիս։ Բաց ես անում քո ձեռքը և ամենքին լիացնում ես քո քաղցր կամքով։

---

Աղօթք յետ ճաշելոյն։

Փառք քեզ տէր, փառք քեզ թագաւոր փառաց որ եաուր մեզ կերակուր ուրախութեան և լցուցեր

Աղօթք ճաշից յետոյ։

Փառք լինի քեզ տէր, քեզ փառաց թագաւորիդ փառք լինի, որ մեզ ուրախութեան սեղանին



զսիրտս մեր 'ի լիութենէ ամենաբաւական ողորմութեան քո։ Լցո՛ և զմեզ հոգւով քով սրբով, որպէս զի կոցուր առաջի քո հաճոյք և մի ամաչեցեալք զի դու գաս և հատուցանես իւրաքանչիւր ըստ գործս իւր։

արժանացրէր և մեր սիրտը լիացրէր քո անհուն ողորմութենով։ Լիացրու և մեզ քո սուրբ հոգւովը որ մենք հաճելի լինենք քո առաջ և ամօթով չը մնանք, որովհետև դու պիտի գաս և ամեն մէկին իր գործին համեմատ՝ հատուցում տաս։

---

Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա 'ի մեզ տէր, և զգործս ձեռաց մերոց յաջողեա մեզ։

Աղօթք յառաջ քան զդասաւորելին։

Ամենաբարի Աստուած, առաքեա առ մեզ զշնորհս հոգւոյդ քո սրբոյ, զի պարզևեսցէ մեզ զմիտս և կազդուրեսցէ զզօրութիւնս հոգւոց մերոց, որպէս զի մենք ընդունելով զաւանդեալ մեզ ուսմունս՝ զարդասցուք քեզ սահ-

Տէր, ուղղիր և յաջողեցրու մեր ձեռների գործը։

Աղօթք դասառնելուց առաջ։

Ամենաբարի Աստուած, ուղարկիր մեզ՝ քո սուրբ Հոգւոյ շնորհքը որ մեզ միտք պարգևէ և զօրացնէ մեր հոգւոյ կարողութիւնները, որպէս զի մենք՝ ընդունելով մեզ տուած ուսմունքը՝ մեծանանք քեզ—ստեղծողիդ փառք տալու, մեր

ծողիդ մերում 'ի փառս, 'ի մխիթարութիւն ծնողաց մերոց և յոգուտ եկեղեցւոյ և հայրենեաց։

ծնողացը մխիթարելու և եկեղեցուն ու հայրենիքին օգտակար լինելու։

---

*Աղօթք յետ դասաւանդութեան:*

Գոհանամք զքէն Արարիչ, զի արժանի արարեր զմեզ շնորհաց քոց՝ ընդունելութեան ուսմանս, օրհնեա՛ զմեծաւորս, զծնողս և զուսուցիչս մեր, որք առաջնորդեն մեզ 'ի զիտութիւն բարութեան և տուր մեզ զկարողութիւն 'ի շարունակութիւն ուսմանս այսորիկ։

*Աղօթք դասաւանդութիւնից յետոյ:*

Շնորհակալ ենք քեզանից՝ Արարիչ, որ մեզ արժանացրիր քո շնորհքներին ուսումն ստանալու. օրհնիր մեր մեծաւորներին, մեր ծնողներին և մեր ուսուցիչներին, որոնք մեզ առաջնորդում են բարի գիտութեան մէջ և կարողութիւն տուր շարունակենք այս ուսումը։

---

Տէ՛ր, մի դարձուցաներ զերեսս քո յինէն, տէր բարերար, ազաչեմ զքեզ, օգնական իմ լեր, տէր մի անարգիր զիս, և մի

Տէ՛ր, երեսդ մի դարձնիր ինձանից. Տէր բարերար, ազաչում եմ քեզ, ինձ օգնական եղիր, Տէր, ինձ մի անարգիր, և մի



թողուր զիս, Ստուած Փրկիչ իմ։

---

*Աղօթք առաւօտեան:*

Գոհանամք զքէն Տէր Ստուած մեր, որ զարթուցեր զմեզ 'ի հանգստենէ քնոյ շնորհիւ ողորմութեան քո։ Զարիւն զմիտս մեր արդարութեամբ առ քեզ, Տէր Ստուած մեր, զի տեսցեն աչք մեր զփրկութիւն քո։ Եկեսցէ և բնակեսցի առ մեզ Ստուածութիւն քո և ողորմութիւն քո հովանի և պահապան լիցի 'ի վերայ պաշտօնէից քոց։ Եւ զմեզ զծառայս քո արժանի արա 'ի տուէ և 'ի գիշերի և յամենայն ժամու միշտ խորհիլ 'ի սէր պատուիրանաց քոց և գոհանալով փառաւորել զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգիդ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։

թողնիր ինձ, Ստուած Փրկիչ իմ։

---

*Առաւոտու աղօթք։*

Շնորհակալ ենք քեզանից, մեր Տէր Ստուած, որ քո ողորմութիւնի շնորհովը զարթացրիր մեզ հանգիստ քնից։ Զարթացրու մեր միտքը արդարութիւնով դէպի քեզ, մեր Տէր Ստուած, որպէս զի մեր աչքերը տեսնեն քո փրկութիւնը։ Թող գայ և բնակուի՛ մեր մէջ քո Ստուածութիւնը և քո ողորմութիւնը հովանի և պահապան լինի՛ քո պաշտօնեաների վրայ։ Եւ մեզ, քո սպասաւորներին, արժանի արա գիշեր և ցերեկ և ամեն ժամանակ մտածել քո պատուիրանները սիրելու մասին և գոհսրտով փառաբանել Հօրը, Որդուն և Սուրբ Հոգուդ։

թէ այժմ և թէ միշտ յաւիտեան։

---

*Աղօթք երեկոյեան։*

Տէր Աստուած մեր, դու պահեա զմեզ խաղաղութեամբ 'ի գիշերիս յայսմիկ և յամենայն ժամանակի։ Ընդ սուրբ երկիւղ քո բեւեռեալ պահեա զմիտս և զխորհուրդս մեր. որպէս զի յամենայն ժամի պահպանեալ լիցուք յորոգայթից թշնամւոյն։ Եւ քեզ հանցուք զօրհնութիւն և զփառս Հօր և Որդւոյն և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

*Երեկոյեան աղօթք։*

Մեր Տէր Աստուած, դու պահիր մեզ խաղաղութիւնով այս գիշեր և ամեն ժամանակ։ Քո սուրբ երկիւղի մէջ հաստատ պահիր մեր միտքը և խորհուրդը, որպէս զի քեզանով ամեն ժամանակ պահպանուած մընանք թշնամու որոգայթից։ Եւ քեզ օրհնութիւն և փառք տանք Հօր և Որդու և Սուրբ Հոգուն թէ այժմ և թէ միշտ յաւիտեան, ամէն։

---

*Մաղթանք առ տիրամայր սուրբ կոյսն։*

Անկանիմք առաջի քո սուրբ Աստուածածին և աղաչեմք զանարատ կոյս-

*Մաղթանք (աղաչանք) Տիրամայր սուրբ կոյսին։*

Ծունր ենք կրկնում քո առաջ, սուրբ Աստուածածին և աղաչում



սդ' բարեխօսեա վասն անձանց մերոց. և աղաչեա զմիածին որդիդ' փրկել զմեզ 'ի փորձութենէ և յամենայն վտանգից մերոց։

---

*Աղօթք առ փրկիչն մեր Քրիստոս։*

Պահպանեա զմեզ Քրիստոս Աստուած մեր ընդ հովանեաւ ողորմութեան և պատուական խաչի քո 'ի խաղաղութեան, փրկեա յերեսելի և անտեսանելի թշնամւոյն։ Արժանաւորեա կոչումեամբ փառաւորեալ զքեզ ընդ Հօր և ընդ Սրբոյ Հոգւոյդ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն։

*Աղօթք մեր փրկիչ Քրիստոսին։*

Քրիստոս Աստուած մեր պահպանիր մեզ խաղաղութեան մէջ քո սուրբ և պատուական խաչի հովանաւորութեան տակ. փրկիր մեզ յայտնի և անյայտ թշնամուց։ Արժանացրու մեզ որ մենք շնորհակալութեամբ փառաւորենք քեզ Հօր և Սուրբ Հոգու հետ միասին, այժմ և միշտ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

---

*Գոհութիւն յետ սրբոյ Հաղորդութեան։*

Լցաք 'ի բարութեանց

*Սուրբ հաղորդութիւնից յետոյ շնորհակալութիւն։*

Տէ՛ր, լիացանք քո

քոց Տէր՝ ճաշակելով զմարմին քո և զարիւն. փառք 'ի բարձունս կերակրողիդ զմեզ։ Որ հանապազ կերակրես զմեզ. առաքեա 'ի մեզ զհոգևոր քո զօրհնութիւն, փառք 'ի բարձունս կերակրողիդ զմեզ։

բարութիւններով՝ ընդունելով քո մարմինը և արիւնը, փառք բարձրումը որ կերակրումես մեզ։ Դու որ միշտ մեզ կերակրում ես, ուղարկիր մեզ քո հոգևոր օրհնութիւնը, փառք լինի քեզ բարձրումը որ մեզ կերակրում ես։

---

*Մաղթանք առ փրկիչն մեր Քրիստոս։*

—

Խաչ քո եղեցի մեզ ապաւէն՝ Տէր Յիսուս, յորժամ երևիս փառօք Հօր ընդ ամպս լուսաւորս։ Ցանժամ մեք մի ամաչեսցուք յուսացեալքս 'ի քեզ, այլ զօրութեամբ քով մեծաւ բերկրեսցուք ընդաջմէ քումմէ՝ որպէս զորդիս լուսոյ և որդիս տուանջեան։

*Մաղթանք մեր փրկիչ Քրիստոսին։*

—

Տէր Յիսուս, քո խաչը թող պաշտպան լինի մեզ, երբ երևաս Հօրդ փառքով լուսաւոր ամպերի վրայ, որպէս զի մենք քեզ վրայ յոյս դնողներս չ'ամաչենք, այլ քո մեծ զօրութիւնով ցնծանք քո աջակողմում ինչպէս լուսի և ցերեկուայ որդիք։

---



Տէր մի դարձուցանիր զերեսս քո յինէն, Տէր բարերար, աղաչեմ զրեզ օգնական իմ լեր, Տէր մի անարգիր զիս, և մի թողուր զիս, Աստուած Փրկիչ իմ։

Տէ՛ր, քո երեսը մի դարձնի՛ր ինձանից, բարերար Տէ՛ր, աղաչում եմ քեզ, ինձ օգնական եղի՛ր, Տէ՛ր, մի անարգի՛ր ինձ և մի թողնի՛լ ինձ իմ փրկիչ Աստուած։

---

Ցիշեա Տէր, զպաշտօնեայս քո, զծնօղսն մեր, զվարդապետս, զեղբայրս, զընկերս, զկերակրիչս, զուխտաւորս, զճանապարհորդս, զհանգուցիչս, զվաստակաւորս, զխստովանողս, զասպաշխարողս, զգերիս, զհիւանդս, զնեղեալս, զիշխանս, զչարարս, զբարերարս, զթշնամիս, զատելիս և որք պատուիրեցին մեզ հաւատով։

Տէ՛ր, յիշի՛ր քո պաշտօնեաներին, մեր ծնողներին, ուսուցիչներին, եղբայրներին, ընկերներին, կերակրողներին, ուխտաւորներին, ճանապարհորդներին, վաստակաւորներին, խոստովանողներին, գերուածներին, նեղացածներին, իշխաններին, չարագործներին, բարերարներին, թշնամիներին, ատելիներին և նրանց, որոնք պատուերներ տուին մեզ հաւատով։

## Աղօթք ճանապարհի։

Տէր ուղղեա զգնացս մեր 'ի ճանապարհս խաղաղութեան, Տէր ուղղեա և առաջնորդեա հոգւոց մերոց և ամենայն հաւատացելոց՝ գնալ յարդարութեան ճանապարհն և 'ի կեանսդ յաւիտենից։

---

Առաջնորդ կենաց և պարգևիչ խաղաղութեան Քրիստոս Աստուած մեր, առաջնորդեա մեզ գնալ 'ի ճանապարհս քո արդարութեամբ, և խաղաղութեամբ ժամանել 'ի նաւահանգիստն կենաց և փրկութեան՝ շնորհօք ողորմութեան քո։ Զի դու ես օգնական և փրկիչ մեր, և քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

---

Առաջնորդեա մեզ, Տէր Աստուած մեր, և ուսո՛ մեզ գնալ 'ի ճանապարհս քո արդարութեամբ. պահեա 'ի խաղաղութեան զկեանս մեր. և զգնացս 'ի հաճոյս քո ժամանեցո՛ զհոգևոր և զմարմնաւոր ընթացս ծառայից քոց անարատ ճանապարհաւդ յաւիտենական 'ի կեանսդ, շնորհօք միածնի քոց Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի, որ եղեւ մեզ առաջնորդ կենաց և յոյս փրկութեան։ Ընդ որում օրհնեալ ես՝ Հայր ամենակալ, հանդերձ կենդանարար և ազատիչ Սուրբ Հոգւովդ,



այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն։

---

## Աղօթք եկեղեցւոյ։

Ի մէջ տաճարիս, և առաջի Աստուածընկալ և պայծառացեալ սուրբ նշանացս և սուրբ սեղանոյս՝ խոնարհեալ երկիւղիւ երկրպագանեմք, զսուրբ՝ զհրաշալի և զյաղթող զյարութիւնդ քո փառաւորեմք, և քեզ մատուցանեմք զօրհնութիւն և զփառս ընդ Հօր և ընդ Սրբոյ Հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

---

## Քարոզ եկեղեցւոյ։

Սուրբ եկեղեցեաս աղաչեսցուք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ 'ի մեղաց և կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ։ Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ և ողորմեա։

---

## Աւուրեան աղօթք։

Տէր, եթէ զչարթունս...

Օրհնեալ համագոյ և միասնական անբաժանելի սուրբ Երրորդութիւն՝ Հայր և Որդի և Հոգի Սուրբ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

---

Լցար առաւօտու ողորմութեամբ քով. ցնծացաք և ուրախ եղաք զամենայն աւուրս կենաց մերոց։

Ուրախ եղաք փոխանակ աւուրցն՝ յորս խոնարհ արարեր զմեզ, և ամացն՝ յորս տեսաք չարչարանս։

Հայեաց, Տէր, 'ի ծառայս քո՝ և 'ի գործս ձեռաց քոց, և առաջնորդեա որդւոց նոցա, եղիցի լոյս Տեառն Աստուծոյ 'ի վերայ մեր։

Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա 'ի մեզ, Տէր, և զգործս ձեռաց մերոց յաջողեա մեզ։

---

Զքէն գոհանամք, Տէր Աստուած մեր որ շնորհեցեր մեզ հանդիստ ընոյ խաղաղութեամբ։ Եւ զարթուցեալ ժամանեցուցեր զմեզ կանխել յիրկրպագութիւն ահաւոր և փառաւորեալ անուանդ քում սրբոյ։ Տուր մեզ, Տէր, աղաչեմք զքեզ, զմնացուածդ զիշերիս խաղաղութեամբ անցուցանել, և զամենայն ժամանակս կենաց պանդխտութեան մերոյ երկիւղիւդ քո ամրացո և պահեա։ Որպէս զի զգուշութեամբ և անարատ վարուք կրօնաւորեալք յայսմ աշխարհիս, ժամանեսցուք յանքոյթ և 'ի խաղաղ նաւահանգիստ յաւիտենական 'ի կեանսդ։ Շնորհօք և մարդասիրութեամբ Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի։ Ընդ որում քեզ Հօր և Հոգւոյդ Սրբոյ վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

---



Սուրբ ես, տէր Աստուած մեր, հզօր և փառաւորեալ, որ նստիս 'ի կառս քերովբէականս, և լոյս ծագիս յարարածս քո։ Լուսաւորեա զմեզ Տէր 'ի ժամ առաւօտուս, որպէս զի 'ի ծագել լուսոյ տունջեանս՝ ծագեսցի առ մեզ գութ մարդասիրութեան քո։ Հեռացո 'ի մէնջ, Տէր, զխաբէութիւն սատանայի, և զբռնութիւն նորա խորտակեա աղօթիւք և բարեխօսութեամբ ամենայն սրբոց։ Սրա և զերկիրս պտղաբերս 'ի սնունդս ծառայից քոց։ Յորոց հանապազ փառաւորեալ գովի ամենասուրբ երրորդութիւնդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

---

Առաւօտ լուսոյ, արեգակն արդար, առ իս լոյս ծագեա։ Բղխումն 'ի հօրէ, բղխեա 'ի հոգւոյս, բան քեզ 'ի հաճոյս։

Գանձդ ողորմութեան, գանձիդ ծածկելոյ. գտող զիս արա։ Դուռն ողորմութեան, դաւանողիս բաց. դատեցո վերնոցն։

Երրեակ միութիւն, եղելոց խնամող և ինձ ողորմեա։ Զարթիր տէր յօգնել. զարթո զթմրեալս. զուարթնոց նմանիլ։

Էդ հայր անսկիզբն. էակից որդի, է միշտ սուրբ հոգի։ Ընկալ զիս զթած, ընկալ ողորմած, ընկալ մարդասէր։

Թագաւոր փառաց, թողութեանց տուող, թող



(2580 38) 12964-58
СССР
им. А. Мясник

ինձ զյանցանս։ Ծողովող բարեաց, ժողովեա և զիս, ժողովս անդրանկաց։

Ի քէն տէր հայցեմ, 'ի մարդասիրէդ ինձ բժշկութիւն։ Լեր կեանք մեռելոյս, լոյս խաւարելոյս, լուծանող ցաւոյս։

Խորհրդոց գիտող, խաւարիս չնորեա. խորհուրդ լուսաւոր։ Ծնունդ հօր ծոցոյ, ծածկելոյս ստուերաւ, ծագեա զլոյս փառաց։

Կենարար փրկիչ, կեցո զմեռեալս. կանգնեա զգլորեալս։ Հաստեա հաւատով. հաստատեա յուսով, հիմնեցո սիրով։

Զայնիւս ապաշեմ, ձեռօքս պաղատեմ. ձիր բարեաց չնորհեա։ Զամբարամբ լուսոյ. զեկաւար ճարտար, զողեալս, ամրոցո։

Ճառագայթ փառաց, ճանապարհ ինձ ցոյց, ճեպել 'ի յերկինս։ Միածինդ հօր. մոյծ զիս յառաջաստ, մաքուր հարսնեացդ։

Ցորժամ դաս փառաց, յահագին աւուրն. յիշեա զիս Քրիստոս։ Նորոգող հնութեանց. նորոգեա և զիս, նորոգ զարդարեա։

Շնորհատու բարեաց, չնորհեա զքաւութիւն, չնորհեա զթողութիւն։ Ուրախացո Տէր, ոգւոյս փրկութեամբ, ոյր վասն եմ 'ի սուգ։

Զար մշակողին, չար սերմանց Նորին, չորացո զպտուղ։ Պարգևիչ բարեաց, պարգևեա իմոց պարտեացս թողութիւն։

Զուր չնորհեա աչաց. ջերմ հեղուլ արտօսր, ջնջել զյանցանս։ Ռետինդ քաղցու, ռամ հոգւոյս արբո, ռահ ցոյց ինձ լուսոյ։

Սէր անուն Յիսուս, սիրով քով ճմլեա զսիրտ իմ քարեղէն։ Վասն զթութեան, վասն ողորմութեանդ վերստին կեցո։

Տենչալոյդ տեսլեամբ տուր ինձ յագենալ, տէր. Յիսուս Քրիստոս։ Բարունդ երկնաւոր, ըստեղա զաշակերտս բամից երկնայնոց։

Ցօղ արեան քո, Տէր, ցօղեա 'ի հոգիս, ցընծասցէ անձն իմ։ Իւրեալս միջոք ւիւծեալ ապաշեմ, ւիւսել ինձ բարիս։

Փրկիչ բոլորից, փութա զիս փրկել փորձութեանց մեղաց։ Քաւիչ յանցանաց, քաւեա զօրհնաբանս, քեզ երգել զփառս։

Սուրբ Աստուածածին բարեխօսութեամբ յիշեա, տէր, և ողորմեա։

---

## Օրհնութիւն Հրեշտակաց։

Փառք 'ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, 'ի մարդիկ հաճութիւն։ Եւ օրհնութիւն քեզ 'ի բարձունս, օրհնեալ ես, տէր Աստուած մեր, օրհնեմք զքեզ և գովեմք զքեզ։ Խոստովանիմք տէր զքեզ և երկրպագանեմք քեզ, փառաւորեմք զքեզ, զոհանամք, Տէր, զքէն, վասն մեծի փառաց քոց։ Տէր թագաւոր, սուրբդ երկնային, Աստուած և Հայր ամենակալ։ Տէր և Որդի հօր միածին Յիսուս Քրիս-

տոս և Սուրբ Որդի։ Տէր Աստուած, զառն Աստուծոյ և Որդի Հօր, որ առեր զմեղս ի կուսէն։ Ողորմեցար, բարձեր զմեղս աշխարհի։ Եւ արդ ընկալ զաղաչանս մեր։ Սուրբդ, որ նստիս ընդ աջմէ Հօր՝ ողորմեաց մեզ։ Զի դու միայն սուրբ, դու միայն բարձրեալ ես, դու միայն Տէր մեր Յիսուս Քրիստոս։ Տէր և Հոգիդ Սուրբ՝ որ ի փառս Աստուած ընդ Հօր, ամէն։

Եւ յամենայն ժամ օրհնեմք զքեզ, տէր և գովեմք զանուն սուրբ քո յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից։ Արժանի արա տէր, զօրս զայս խաղաղութեամբ, և առանց մեղաց պահեա զմեզ։ Օրհնեալ ես տէր Աստուած հարցն մերոց. գովեալ և փառաւորեալ է անուն Սուրբ քո յաւիտեանս, ամէն։ Օրհնեալ ես տէր, ուսո՛ ինձ զարդարութիւնս քո (երիցս կրկնեա)։ Տէր, ապաւէն եղիր մեր յազգէ յազգ։ Ես ասացեալ, Տէր, ողորմեա՛ ինձ և բժշկեա՛ զանձն իմ, ես մեղայ քեզ։ Ցոյց մեզ, Տէր, զողորմութիւնս քո և զփրկութիւնս քո տո՛ւր մեզ։ Տէր, ողորմութիւն քո յաւիտեան, զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ։ Տէր իմ, զքեզ ապաւէն ինձ արարի, ուսո՛ ինձ առնել զկամս քո զի դու ես Աստուած իմ։ Ի քէն է Տէր աղբիւր կենդանութեան, և լուսով երեսաց քոց տեսանիմք զլոյս ծագեա՛ զողորմութիւնս քո որք ճանաչեն զքեզ տէր։

---



## Աղօթք առ Հայրն Աստուած։

Հայր գթութեանց և Աստուած ամենայն մխիթարութեանց, որ մխիթարես զմեզ յամենայն նեղութեան մերում. լուր և այժմ ձայնի պաղատանաց ծառայից քոց ընդունելով զաղաչանս մեր. անցո՛ ի մէնջ զցասումն պատուհասի յանցանաց մերոց բարերարութեամբ քով։ Ներեա՛ և լուր մեզ, քաւեա՛ և թո՛ղ զմեղս մեր, արժանաւորեա՛ զոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Որդւոյ և ընդ սրբոյ Հոգւոյդ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

---

## Աղօթք առ Որդին Աստուած։

Անկեալ առաջի քո, բարերար և բաղումողորմ Աստուած, աղաչեմք ամենայն սրտիւք մերովք և խնդրեմք զգթութիւն ի քէն, որպէս խօստացար ծառայից քոց և ասացեր զամենայն զոր ինչ խնդրիցէք յաւատով յանուն Որդւոյ ի Հօրէ, տացի ձեզ։ Ընդունեա՛ և այժմ հաւատացելոց ի քեզ և կատարեա՛ ի բարի զխնդրուածս մեր, զի ի քեզ եմք ապաւինեալ։ Եւ քո առատ ողորմութեամբդ մխիթարեա՛ զմեզ ի կեանս յայսոսիկ, և առաջնորդեալ հասո՛ յանճառ երկնից արքայութիւնդ, ի փառաբանութիւն և ի պատիւ ամենասուրբ երրորդութեանդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

---

## Աղօթք առ ամենասուրբ Հոգին։

Խաղաղութեամբ քով հոգիդ սուրբ Աստուած ճշմարիտ, որ ի վեր է բան զամենայն միտս և զխորհուրդս, մխիթարեա զանձիս ծառայից քոց ընդունելով զաղաչանս մեր, անցո՛ ի մէնջ զդաստումն պատուհասի յանցանաց մերոց, բարերարութեամբ քով։ Ներեա՛ և լուր մեզ, քաւեա՛ և թող զմեղս մեր. արժանաւորեա՛ զոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ Որդւոյն միածնի, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

---

## ԹԱՄԱՄՈՒՏՔ։

### Ծննդեան։

Աստուածածին անհարսնացեալ զքանն անսկիզբն յղացար և զԱստուածն անիմանալի ծնար, զքանդ պարարկին ի գիրկս քո բարձեր, նմա անդադար բարեխօսեա՛ վասն անձանց մերոց։

---

### Յարութիւն։

Քրիստոս յարեաւ ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգևեաց նմա փառք յաւիտեանս, ամէն։

---



### Համբարձման։

Հիացան վերնական բազմութիւնքն տեսանելով զքեզ ի հրեղէն կառս բազմեալ՝ սարսեալ ասէին, ով է սա որ դիմեալ գայ յերկրմայ. և եկեալ մտանէ փառօք ի փառս, Տէր, փառք քեզ։

---

### Հոգեգալստեան։

Այսօր ի հրեղէն լեզուս բաժանեալ հանդերձ յառաքեալսն լուսաւորելով զնոսա, և այժմ աղաչեմք զքեզ, սուրբ Հոգիդ Աստուած, որ ես պատճառ կենդանութեան եղելոց, և խաղարար աշխարհի, խնայեա՛ և կեցո՛ զմեզ։

---

### Խաչի։

Առաջի պատուական ամենայազթ խաչի քո անկանիմք երկրպագելով և խնդրեմք զթողութիւն յանցանաց մերոց, քանզի սովաւ բարձեր զդատապարտութիւն ազգի մարդկան։ Եւ այժմ վասն սրբոյ աստուածային քոյ նշանի չնորհեա՛ զերկնային զխաղաղութիւնդ ամենայն աշխարհի։

---

### Լուսավորչի։

Գրիգոր սուրբ քահանայապետ, որ զհաւատս

ուսուցեր և զբանակս դիւացն հալածեցեր, մարդկան ուսուցեր քարոզել զերրորդութիւնն, զսակեցար յարքայութեանն, արդ բարեխօս լեր առ Տէր վասն մեր։

## Ամենայն սրբոց։

Բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնին, սրբոյն Յովհաննու Կարապետին, սրբոյն Սահականոսի նախավկային, և սրբոյն Գրիգորի մերոյ լուսաւորչին, և սրբոց առաքելոց և մարգարէից, հայրապետաց և վարդապետաց, մարտիրոսաց և թագաւորաց, ճգնաւորաց և կուսանաց, նահատակաց և միանձանց, և ամենայն սրբոց քոց հնոց և նորոց, յայտից և անյայտից. զխաղաղութիւն և զերկնային ողորմութիւն բո պարգեւեա մեզ, մարդասէր Տէր։

## Կիրակեան Հանգանակ

Հաւատամք ի մի Աստուած ի Հայրն ամենակալ յարարիչն երկնի և երկրի, երեւելեաց և աներևոյթից։

Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս Որդին Աստուծոյ ծնեալն յԱստուծոյ Հօրէ միածին, այսինքն էութենէ Հօր։ Աստուած յԱստուծոյ, լոյս 'ի լուսոյ, Աստուած ճշմարիտ, յԱստուծոյ ճշմարտէ ծնունդ և



ոչ արարած։ Նոյն ինքն ի բնութենէ հօր, որով ամենայն ինչ եղև յերկինս և ի վերայ երկրի երևելիք և աներևոյթք։

Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ ի յերկնից մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ կուսէն հոգւովն սրբով։ Որով էառ զմարմին, զհոգի և զմիտ, և զամենայն որ ինչ է ի մարդ, ճշմարտապէս և ոչ կարծեօք։

Չարչարեալ, խաչեալ, թաղեալ.
Յերրորդ աւուր յարուցեալ.
Ելեալ ի յերկինս նովին մարմնովն
Նստաւ ընդ աջմէ հօր։

Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր ի դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան.

Հաւատամք և ի սուրբ Հոգին յանեղն և ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս և ի մարգարէս և յաւետարանս։ Որ էջն ի Յորդանան, քարոզեաց, զառաքեալն, և բնակեցաւ ի սուրբսն։

Հաւատամք և ի միմիայն ընդհանրական և յառաքելական եկեղեցի։

Ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց։ Ի յարութիւն մեռելոց, ի դատաստանն յաւիտենից, հոգւոց և մարմնոց, յարքայութիւնն երկնից և ի կեանս յաւիտենականս։

Իսկ որք ասեն՝ էր երբեմն, յորժամ ոչ էր որդի, կամ էր երբեմն, յորժամ ոչ էր սուրբ հոգի, կամ թէ՝ յոչէից եղեն կամ յայլմէ էութենէ ասեն լինել զՈրդին Աստուծոյ և կամ զսուրբ Հոգին, և թէ փոփոխելիք են կամ այլայլելիք. զայնպիսին նզովէ կաթուղիկէ և առաքելական եկեղեցի։

---

## Ա. Գրիգոր Լուսաւորչի աւելացրածը։

Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս, երկրպագանելով սրբոյ երրորդութեան և միոյ աստուածութեանն Հօր և Որդւոյ և հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

---

## Երեկոյեան Աղօթքներ։

Ալէլուիա, ալէլուիա։

Հայս զուարթ սուրբ փառաց անմահի, հօր երկնաւորի սրբոյ կենարարի Յիսուս Քրիստոս։

Եկեալքս 'ի մտանել արեգական, տեսաք զլոյս երեկոյիս։ Օրհնեմք զհայր և զորդի և սուրբ հոգիդ Աստուծոյ։ Եւ ամենեքեան ասեմք ամէն։ Արժանաւորեա զմեզ յամենայն ժամ, օրհնել ձայնիւ երգով զանուն փառաց ամենասուրբ երրորդութեանդ։ Որ տաս զկենդանութիւն վասն որոյ և աշխարհս զքեզ փառաւորէ։

---



Լուր ձայնից մերոց, տէր Աստուած մեր, ընկալ զաղաչանս մեր, զհամբարձումն ձեռաց մերոց և զբանս աղօթից, որբելով զերեկոյի պատարագս մեր 'ի հոտ անուշից՝ 'ի հաճոյս ընդ պատարաստել։ Յաւել 'ի մեզ, Տէր ամենակալ, զհաւատ, զյոյս, զսէր և զամենայն գործս առաքինութեան, որպէս զի ըստ կամաց քոց բարեսիրաց՝ միշտ կրօնաւորեալք բարեպաշտութեամբ ի տուէ և ի զիշերի. և արժանաւորք եղիցուք յաղագս անձանց մերոց փրկութեան, և վասն հոգևոր կենացդ աղաչել զքեզ, Տէր, և գտանել ի քէն զշնորհս և զողորմութիւն, և զոհանալով փառաւորեսցուք զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգիդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

---

Քեզ երկրպագանելով Տէր Աստուած մեր գոհանամք զքէն յաղագս խաղաղութեամբ անցուցանելոյ ի մէնջ զերկարութիւն տունջեանս։ Տուր, մեզ Տէր, աղաչեմք զքեզ զերեկս և զառաջիկայ զիշերս առանց մեղաց, և առանց դայթակղութեան անցուցանել, հաստատուն կալ և մնա, ի Հաւատ՝, ի Յոյս ի Սէր և ի պատուիրանապահութեան քոյ։ Խնդրելով զխաղաղութիւն ամենայն աշխարհի, և եկեղեցւոյ բուժ սրբոյ զհաստատութիւն, և անձանց մերոց զփրկութիւն։ Որպէս զի ընդունելով ի քէն զհայցուածս մեր և զմեծ վայելչական փառաբանութիւն միշտ ի բարձունս առաքեսցուք ամենազօր տէրու-

թեանդ, Քրիստոս Աստուած մեր, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

---

Հայր գթած, բարեխնամող, արարիչ ամենայն արարածոց ընկալ զպաղատանս ծառայից քոց ի ժամ երեկոյիս, որ առատդ ես առ ամենեսեան պարգևօք բարերարութեան քո։ Ողորմեա, Տէր, ամենայն աշխարհի, և եկեղեցւոյ քում սրբոյ. հիւանդաց, վշտացելոց, ճանապարհորդաց, նաւորդաց, խոստովանողաց, ապաշխարողաց, և հոգւոցն հանգուցելոց։ Զի դու, Տէր ամենակալ, գիտես զպէտս մեր և զկարիս առաւել քան զոր խնրեմք և իմանամք, և Քեզ ընդ Որդւոյ և ամենասրբոյ Հոգւոյդ վայել է փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

---

## Աղօթք տեառն Ներսիսի։

Հաւատով խոստովանիմք և երկրպագանիմք Քեզ, Հայր և Որդի և սուրբ Հոգի, անեղ և անմահ ընութիւն, արարիչ հրեշտակաց և մարդկան և ամենայն եղելոց, ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս։ Հաւատով խոստովանիմ և երկիր պագանեմ քեզ անբաժանելի լոյս միասնական սուրբ երրորդութեան և մի Աստուածութիւն, արարիչ լուսոյ և հալածիչ խաւարի, հալածեա ի հոգւոյ իմմէ զխաւար մեղաց և անպիտութեան և լուսաւորեա զմիտս իմ ի ժամոյս այսմիկ աղօթել քեզ ի հաճոյս և ընդունել ի քէն զխնդրուածս իմ, և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս։



Հայր երկնաւոր Աստուած ճշմարիտ, որ առաքեցիր զՈրդիդ քո սիրելի 'ի խնդիր մոլորեալ ոչխարին. մեղայ յերկինս և առաջի քո, ընկալ զիս որպէս զանառակ որդին, և և զգեցո ինձ զպատմուճանն առաջին զոր մերկացայ մեղօք, և ողորմեա քո արարածոց՝ և ինձ բազմամեղիս։

Որդի Աստուծոյ Աստուած ճշմարիտ, որ խոնարհեցար ի հայրական ծոցոյ, և առեր մարմին ի Սրբոյ կուսէն Մարիամայ, վասն մերոյ փրկութեան խաչեցար, և յարեար ի մեռելոց, և համբարձար փառօք առ Հայր, մեղայ յերկինս և առաջի քո, յիշեա զիս որպէս զաւազակն, յորժամ գաս արքայութեամբ քով, և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս։

Հոգի Աստուծոյ Աստուած ճշմարիտ, որ իջեր 'ի Յորդանան և 'ի վերնատունն, և լուսաւորեցիր զիս մկրտութեամբ սուրբ աւազանին, մեղայ յերկինս և առաջի քո, մաքրեա զիս վերստին Աստուածային հրով քով, որպէս հրեղէն լեզուօք զառաքեալսն, և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս։

Անեղ ընութիւն, մեղաց քեզ մտօք իմովք, հոգւով և մարմնով իմով, մի յիշեր զմեղս իմ զա-

ռաջինս՝ վասն անուանդ քում սրբոյ, և ողորմեա՛ քո արարածոց և ինձ բազմամեղիս։

Տեսող ամենայնի, մեղայ քեզ խորհրդով, բանիւ և գործով, ջնջեա՛ զձեռագիրս յանցանաց իմոց, և գրեա՛ զանուն իմ 'ի գպրութեան կենաց, և ողորմեա՛ քո արարածոց և ինձ բազմամեղիս։

Քննող գաղտնեաց, մեղայ քեզ կամայ և ակամայ, գիտութեամբ և անգիտութեամբ, թողութիւն շնորհեա՛ մեղաւորիս, զի ի ծննդենէ սուրբ աւազանին մինչև ցայսօր մեղուցեալ եմ առաջի աստուածութեանդ քոյ՝ զգայարանօք իմովք, և ամենայն անդամօր մարմնոյս և ողորմեա՛ քո արարածոց և ինձ բազմամեղիս։

Ամենախնամ Տէր, դիր պահապան աչաց իմոց զեղկիւղ քո սուրբ՝ ոչ ես հայել յարատ, և ականջաց իմոց ոչ ախորժել լսել զբանս չարութեան, և բերանոյ իմոյ ոչ խօսիլ զստութիւն, և սրտի իմոյ ոչ խորհիլ զչարութիւն և ձեռաց իմոց ոչ գործել զանիրաւութիւն, և ոտից իմոց ոչ գնալ ի ճանապարհս անօրէնութեան, այլ ուղղեա՛ զշարժումն սոցա լինիլ միշտ ըստ պատուիրանաց քոց յամենայնի, և ողորմեա՛ քո արարածոց և ինձ բազմամեղիս։

Հաւր կենդան Քրիստոս, զհաւր սիրոյ քո զոր արկեր յերկիր՝ բորբոքեա՛ յանձն իմ-զի այրեսցէ զախտ հոգւոյ իմոյ, և սրբեսցէ զխիղճ մտաց իմոց, մաքրեսցէ զմեղս մարմնոյ իմոյ, և վառեսցէ զլոյս գիտութեան քոյ ի սրտի իմում, և ողորմեա՛ քո արարածոց և ինձ բազմամեղիս։



Իմաստութիւն Հօր Յիսուս, տո՛ւր ինձ իմաստութիւն զբարիս խորհիլ և խօսիլ և գործել առաջի քոյ յամենայն ժամ, ի չար խորհրդոց ի բանից և ի գործոց փրկեա՛ զիս, և ողորմեա՛ քո արարածոց և ինձ բազմամեղիս։

---

Կամեցող բարեաց, Տէր կամարար, մի թողուր զիս ի կամս անձին իմոյ գնալ, այլ առաջնորդեա՛ ինձ լինիլ միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց, և ողորմեա՛ քո արարածոց և ինձ բազմամեղիս։

Արքայ երկնաւոր, տո՛ւր ինձ արքայութիւն քո՝ զոր խոստացար սիրելեաց քոց և զորացո՛ զսիրտ իմ ասել զմեղս, և ոիրել զքեզ միայն և առնել զկամս քո, և ողորմեա՛ քո արարածոց և ինձ բազմամեղիս։

Խնամող արարածոց, պահեա՛ նշանաւ խաչի քո զհոգի և զմարմին իմ ի պատրանաց մեղաց, ի փորձութեանց դիւաց, և ի մարդոց անիրաւաց և յամենայն վտանգից հոգւոյ և մարմնոյ, և ողորմեա՛ քո արարածոց և ինձ բազմամեղիս։

Պահապան ամենայնի Քրիստոս, աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ և ի գիշերի ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ, ի ննջել և ի յառնել, զի մի երբէք սասանեցայց, և ողորմեա՛ քո արարածոց և ինձ բազմամեղիս։

Ստուած իմ, որ բանաս զձեռն քո, և ընուս զամենայն արարածս ողորմութեամբ քով, քեզ յանձն

առնեմ զանձն իմ, դու հոգա և պատրաստեա զպէտ հոգւոյ և մարմնոյ իմոյ յայսմհետէ մինչև յաւիտեան, և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս։

Դարձուցիչ մոլորելոց, դարձո զիս ի չար սովորութեանց իմոց ի բարի սովորութիւն, և բեւեռեա ի հոգի իմ զսոսկալի օր մահուան և զերկիւղ գեհենոյն և զսէր արքայութեանն. զի զոջացայց ի մեղաց, եւ գործեցից զարդարութիւն. եւ ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս։

Ողբիւր անմահութեան, ողբերացո՛ ի սրտէ իմմէ զարտասուս ապաշխարութեան որպէս պոռնկին. զի լուացից զմեղս անձին իմոյ յառաջ քան զելանելն իմ յաշխարէս, և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս։

Պարգևիչ ողորմութեան, պարգևեա ինձ ուղղափառ հաւատով՝ և բարի գործով՝ և սուրբ մարմնոյ և արեան քո հաղորդութեամբ զալ առ քեզ. և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս։

Բարերար Տէր, հրեշտակի բարւոյ յանձն արասցես զիս՝ քաղցրութեամբ աւանդել զհոգի իմ, և անխռով անցուցանել ընդ չարութիւն այսոցն՝ որք են ի ներքոյ երկնից, և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս։

Լոյս ճշմարիտ Քրիստոս, արժանաւորեա զհոգի իմ ուրախութեամբ տեսանել զլոյս փառաց քոց՝ ի կոչման աւուրն. և հանդէպ յուսով բարեաց յօթեւանս արդարոց մինչև յօր մեծի զալստեան քոյ։



և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս։ Դատաւոր արդար, յորժամ դաս փառաւք Հօր դատել զկենդանիս և զմեռեալս, մի մատներ՝ ի դատաստան ընդ ծառայի քո, այլ փրկեա զիս ի յաւիտենական հրոյն, և լսելի արա ինձ զերանաւէտ կոչումն արդարոց յերկնից արքայութիւնդ. և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս։ Ամենատոմար Տէր, ողորմեա ամենայն հաւատացելոց ի բեղ, իմոց և օտարաց, ծանօթից և անծանօթից, կենդանեաց և մեռելոց, շնորհեա և թշնամեաց իմոց և ատելեաց զթողութիւն՝ որ առիս յանցանաց, և զարձո զնոսա ի չարեացն զոր ունին վասն իմ, զի ողորմութեան քում արժանի եղիցին, և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս։

Փառաւորեալ Տէր, ընկալ զաղաչանս ծառայիս քո, և կատարեա ի բարի զխնդրուածս իմ բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնի, և Յովհաննու Մկրտչին, և սրբոյն Ստեփանոսի Նախավկային, և սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին, և սրբոց Առաքելոց, Մարգարէից, Վարդապետաց, Մարտիրոսաց, Հայրապետաց, Ճրգնաւորաց, կուսանաց, միանձանց, և ամենայն սրբոց քոց երկնաւորաց և երկրաւորաց։ Եւ բեզ փառք և երկրպագութիւն անբաժանելի սուրբ Երրորդութեանդ՝ յաւիտեանս յաւիտենից ամէն։

---

## Առ խաչեցեալն Յիսուս։

Խաչի քո, Քրիստոս, երկրպագանեմք, և զսուրբ խաչելութիւնդ քո մեծարուցանեմք, և զսուրբ Յարութիւնդ քո փառաւորեմք։ Եկայր հաւատացեալք երկրպագեսցուք Քրիստոսի Աստուծոյ մերոյ, վասն զի եկն ի ձեռն խաչին իւրոյ շնորհեաց պարգևս աշխարհի։ Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ խաչեցար վասն մեր ողորմեա մեզ։

Փառք սուրբ խաչիդ ալէլուիա. սուրբ մատնութեանդ ալէլուիա, չարչարանացդ ալէլուիա, խաչելութեանդ ալէլուիա, սրբոյ թաղմանդ ալէլուիա, սուրբ յարութեանդ ալէլուիա.

Փառք և երկրպագութիւն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

---

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,
Տէր ողորմեա, Տէր ողորմեա։

Արի Աստուած հարցն մերոց,
Որ ապաւէնդ ես նեղելոց,
Հաս յօգնութիւն ծառայից քոց՝
Անօգնական ազգիս Հայոց։
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա։

—



Միջնորդութեամբ սրբոյ խաչիդ
Եւ անարատ սուրբ ծնողիդ,
Ցիշեա զյեղումն արեան փրկչիդ,
Ել ի խնդիր փոքու հօտիդ։
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա։

—

Զի զիտացաք մեր հաւաստեաւ,
Որչափ մեղաց մերոց լցաւ,
Ուստի տէրդ մեր բարկացաւ,
Առ ի խրատել զմեզ զարթեաւ։
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա։

—

Արդ անկանիմք առաջի քոյ,
Գոչեմք, մեղայ Տեառնդ մերոյ,
Դարձ՛ ի մէնջ զցասումն քո,
Վասն անսպառ գթութեան քո։
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա։

—

Ի քէն հայցեմք մեզ օգնութիւն.
Ամենասուրբ երրորդութիւն,
Տուր աշխարհս խաղաղութիւն,
Քրիստոնէից հաստատութիւն,
Ընջեցելոց արքայութիւն,
Եւ հիւանդաց բժշկութիւն։

---

## Աղօթք Մանասէի Թագաւորին։

Տէր ամենակալ, Աստուած Աբրահամու, Իսահակայ, Յակոբայ՝ և զաւակի նոցա արդարոց, ամենակալ Տէր, թող զմեզս մեր։ Որ արարեր զերկինս և զերկիր, և զամենայն զարդ նոցա. ամենայն։

Որ կապեցեր զծով բանիւ հրամանի քոյ, փրկեցեր զխորս, կնքեցեր ահաւոր և փառաւորեալ անուամբ քով սրբով. ամենայն։

Որ ամենայն ինչ սարսի և զողայ յերեսաց ահի զօրութեան քո, ամենայն։

Անբաւ է մեծ վայելչութիւն փառաց սրբութեան քո, սաստիկ է բարկութիւն սպառնալեաց քոց ի վերայ մեղաւորաց, անչափ և անքննին են զորմութիւնք աւետեաց քոց, ամենայն։

Դու, Տէր, բարձեալ, զքեզ, երկայնամիտ, բազումողորմ, և զղջանաս ի վերայ չարեաց մարդկան, ամենակալ։

Դու, Աստուած, ոչ եդեր ապաշխարութիւն վասն արդարոցն Աբրահամու, Իսահակայ և Յակոբայ, որք ոչ մեղան քեզ, ամենայն։

Այլ եդեր ապաշխարութիւն վասն իմ մեղաւորիս, զի մեղայ աւելի քան զաւազ ծովու, և բազմացան անօրէնութիւնք իմ, ամենայն։

Չեմ արժանի հայել և տեսանել զբարձրութիւնս երկնից, ի բազմութենէ անօրէնութեան իմոյ, ամենայն։

Կորացեալ եմ ես ի բռնութենէ կապանաց



երկաթից, և ոչ գոյ ինձ հանգիստ. ամենայն։

Բարկացուցի զսրտամտութիւն, և չար առաջի քո արարի, կանգնեցի պատկեր և բազմացուցի զպղծումն, ամենայն։

Եւ արդ, Տէր, խոնարհեցուցանեմ զծունր սրտի իմոյ, և հայցեմ ի քաղցրութենէ քումմէ, ամենայն։

Մեղայ, Տէր, մեղայ, և զանօրէնութիւնս ես ինձէն գիտեմ. ամենայն։

Աղաչեմ և խնդրեմ ի բէն թող ինձ, Տէր, թող ինձ, և մի կորուսաներ զիս ըստ անօրէնութեան իմոյ, ամենայն։

Մի յաւիտեան բարկանար ինձ, Տէր, և մի յիշեր զչարիսն իմ. և մի պարտաւորիր զիս ընդ իջեալսն ի նրրրոյ երկրի աշօք, ամենայն։

Զի դու, Աստուած, Աստուած ապաշխարողաց ես, և յիս ցոյց զբարերարութիւնդ քո որ անարժան եմ, ամենայն։

Կեցուցցես զիս ըստ բազում ողորմութեան քում, և ես օրհնեցից զքեզ զամենայն աւուրս կենաց իմոց, ամենայն։

Զքեզ, Տէր օրհնեն ամենայն զուարթունք երկնից, և քո են փառք յաւիտեանս, ամէն։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

---

## Տասն պատուիրան։

1. Ես եմ Տէր Աստուած քո, մի եղիցին քեզ այլ աստուածք բաց յինէն։
2. Մի արասցես քեզ կուռս ըստ ամենայն նմանութեան, մի երկերպագանիցիս նոցա, և մի պաշտեսցես զնոսա։
3. Մի առնուցես զանուն Տեառն Աստուծոյ քո ի վերայ սնոտեաց։
4. Յիշեսջիր զօրն շաբաթու սրբել զնա։
5. Պատուեա զհայր քո և զմայրս, զի բարի լինիցի քեզ, և զի երկայնակեաց լինիցիս ի վերայ երկրին բարութեան։
6. Մի սպանաներ։
7. Մի շնար։
8. Մի գողանար։
9. Մի սուտ վկայեր զընկերէ քումմէ։
10. Մի ցանկանար տան ընկերի քո, և մի ամենայնի, զինչ ընկերի քո իցէ։

---

## Դանիէլ Մարգարէի գիրքը։

Յամին ութուտասներորդի Նաբուգոդոնոսորայ արքայի. արար պատկեր ոսկի. բարձրութիւն նորա վաթսուն կանգուն և լայնութիւն նորա կանգուն վեց, և կանգնեաց զնա ի դաշտին դէյերայ յաշխարհին բաբելացւոց։

Եւ արձակեաց ժողովել զզօրավարս և զզօրա-



գլուխս՝ և զկուսակալս՝ զպետս՝ և զինաւորս՝ և զգործակալս՝ և զամենայն իշխանս աշխարհաց գալ ի նաւակատիս պատկերին՝ զոր կանգնեաց արքայն Նաբուգոդոնոսոր։ Եւ ժողովեցան կուսակալք՝ զօրավարք՝ և զօրագլուխք՝ պետք՝ և բռնաւորք, մեծամեծք՝ և գործակալք և ամենայն իշխանք աշխարհաց, գալ ի նաւակատիս պատկերին, զոր կանգնեաց արքայն Նաբուգոդոնոսոր։ Եւ քարոզ կարգայր զօրութեամբ՝ և ասէր, ձեզ ասի ազգք՝ և ազինք՝ և լեզուք։ Յորժամ լսիցէք զձայն փողոյ՝ սրնգի՝ թմբկի՝ և քնարի տաւղի և երգոյ միաբանութեան՝ և ամենայն ազգաց և արուեստականաց, անկանիջիք՝ և երկրպագանիջիք՝ պատկերին զոր կանգնեաց Նաբուգոդոնոսոր արքայ։ Եւ որ ոչ անկեալ երկիր պագանիցէ ի նմին ժամու ընկեսցի ի հնոց հրոյն բորբոքելոյ։ Եւ եղև իբրև լուան ազգքն զձայն փողոյն սրնգին, տաւղի և նուագարանաց, և ամենայն ազգաց արուեստականաց, անկանէին ամենայն ազգ և ազինք և լեզուք, և երկիր պագանէին պատկերին ոսկւոյ. զոր կանգնեաց արքայ Նաբուգոդոնոսոր։ Յայն ժամ մատեան արք բաղդէացիք և եղէն չարախօսք զհրէից, առ Նաբուգոդոնոսոր։ Եւ ասեն. արքայ՝ յաւիտեան կաց։ Դու հրաման եատուր ամենայն մարդոց որ լսիցէ զձայն փողոյ և սրնգի և քնարի, և տաւղի և նուագարանաց, և ամենայն ազգաց արուեստականաց։ Եւ որ ոչ երկրպագանիցէ պատկերին ոսկւոյ՝ անկցի ի հնոց հրոյն բորբոքելոյ։

Արդ են ասա արք հրէայք, զորս կացուցեր ի վերայ գործոց աշխարհիս բաբելացւոց. Սեդրաք, Միսաք, և Աբեդնագով, որք ոչ հնազանդեցան հրամանի քում ուրբայ, և զաստս քո ոչ պաշտեն, և պատկերիդ ոսկւոյ զոր կանգնեցեր երկիր ոչ պագանեն։ Յայն ժամ Նաբուգոդոնոսոր սրամտութեամբ և բարկութեամբ հրամայեաց ածել զՍեդրակ զՄիսաք զԱբեդնագով. և ածին առաջի թագաւորին։ Պատասխանի եառ Նաբուգոդոնոսոր և ասէ ցնոսա. թէ արդարև Սեդրաք, Միսաք և Աբեդնագով, զդիս իմ ոչ պաշտէք և պատկերին ոսկւոյ զոր կանգնեցի երկիր ոչ պագանիցէք։ Բայց եթէ պատրաստ լինիցիք, զի յորժամ լսիցէք զձայն փողոյ սրնգի և թմբկի, և քնարի. և զմիաբանութիւն ամենայն ազգաց արուեստականաց, անկանիցիք և երկիրպագանիցէք պատկերին զոր արարի, թէ ոչ պագանիցէք երկիր, ի նմին ժամու անկցիք ի հնոց հրոյն բորբոքելոյ. և ով է Աստուած որ փրկեսցէ զձեզ ի ձեռաց իմոց։ Պատասխանի ետուն Սեդրաք՝ Միսաք՝ և Աբեդնագով, և ասեն ցարքայ Նաբուգոդոնոսոր, ոչինչ է պիտոյ վասն բանիդ այդորիկ տալ քեզ պատասխանի։

Զի է մեր Աստուած յերկինս զոր մեքն պաշտեմք, կարող է փրկել զմեզ ի հնոցէ հրոյդ բորբոքելոյ, և ի ձեռաց քոց ուրբոյ ապրեցուցանել զմեզ։

Այլ թէ ոչ այս ինչ յայտնի լիցի քեզ արքնոյ, զդիս քո մեք ոչ պաշտեմք. և պատկերիդ



ոսկւոյ զոր կանգնեցիր երկիր ոչ պագանեմք։ Յայնժամ Նաբուգոդոնոսոր լի եղև սրամտութեամբ, և դէմն երեսաց նորա շրջեցաւ ի վերայ Սեդրաքայ՝ Միսաքայ և Աբեդնագովի, և ասէ՝ ջեռուցէք զհնոցն եօթնապատիկ զի մինչև ի վախճան այրեսցին։ Եւ արք հինգ զորաւորք զօրութեամբ կապեցին զՍեդրակ զՄիսաք և զԱբեդնագով արկանել ի հնոց հրոյն բորբոքելոյ։ Յայնժամ արքն այնորիկ կապեցան պատուճանօք և վարտիւք, արտախուրակօք և գանկապանօք իւրեանց, և ընկեցան ի մէջ հնոցի հրոյն բորբոքելոյ։ Զի հրաման թագաւորին սաստկանայր, և հնոցն բորբոքիւր եօթնապատիկ առաւել յոյժ։

Եւ երերին նորա Սեդրաք՝ Միսաք՝ և Աբեդնագով, անկան ի մէջ հնոցին կապեալք։ Եւ գնային ի մէջ հրոյն, օրհնէին և գովէին զՏէր Աստուած։ Յարեաւ ոգարեա, և եկաց յաղօթս այսպէս, երաց զբերան իւր ի մէջ հրոյն և ասէ՝ Օրհնեալ ես, Տէր Աստուած, հարցն մերոց, գովեալ փառաւորեալ է անուն քո յաւիտեան։ Զի արդարես յամենայնի զոր ածեր ի վերայ մեր և ամենայն գործք քո ճշմարիտք են. և ուղիղք են ճանապարհք քո և ամենայն պատասխան քո ճշմարտութիւն։ Եւ իրաւունս ճշմարտութեան արարեր՝ ըստ ամենայնի զոր արարեր մեզ. և քաղաքին սրբոյ հարցն մերոց Երուսաղէմի, զի ճշմարտութեամբ և յիրաւի ածեր զայս ամենայն վասն մեղաց մերոց։ Զի մեղաք և անօրինեցաք ապստամբ լինիլ ի քէն, և առաւել մեղաք յամենայնի։

Եւ պատուիրանաց քոց ոչ անսացար, ոչ պահեցաք և ոչ արարաք որպէս պատուիրեցեր մեզ զի բարի լինիցի մեզ։ Եւ զամենայն զոր ածեր ի վերայ մեր և զամենայն զոր արարեր մեզ արդար դատաստանաւ արարեր։ Եւ մատնեցեր զմեզ ի ձեռս թշնամեաց մերոց, անօրինաց, խստաց ապստամբողաց. և թագաւորի անիրաւի և չարի քան զամենայն երկիր։ Եւ արդ ոչ գոյ մեզ բանալ զբերանս զի ամօթ և նախատինք եղեալ ծառայից քոց և պաշտօնէից։ Այլ մի՛ մատներ զմեզ իսպառ վասն անուան քոյ, և մի ցրեր զուխտ քո։ Եւ մի ի բացէ առներ զողորմութիւնս քո ի մէնջ. վասն Աբրահամու սիրելւոյ քոյ և վասն Իսահակայ ծառայի քոյ և վասն Իսրայելի սրբոյ քոյ։

Որոց խօսեցար բազմացուցանել ըզզաւակ նոցա իբրև զաստեղս երկնից, և իբրև զաւազ առափին ծովու։ Եւ արդ Տէր, նուազեցաք քան զամենայն ազգս. և եմք տառապեալք յամենայն երկրի, այսօր վասն մեղաց մերոց։ Եւ ոչ գոյ ի ժամանակի յայսմիկ իշխան մարգարէ և առաջնորդ, ոչ ողջակէզք և ոչ զոհք և ոչ պատարագք և ոչ խունկք. և ոչ տեղի տալոյ երախայրիս առաջի քո։

Եւ զտանել զողորմութիւն ի քէն, այլ անձամբք բեկելոք և հոգւովք տառապանաց ընդունելի լիցուք։ Իբրև զողջակէզս խոյոց և զուարակաց և իբրև զբիւրաւորս զառ[illegible] պարարուց. այնպէս եղիցի պատարագս մեր [illegible]ր առաջի քո. լինիլ կատարեալ զկնի քո. զի [illegible] ամօթ յուսացելոց ի քեզ։ Եւ արդ զամբ զնե[illegible] քո ամենայն սրտիւք մերովք,



և երկնչիմք ի քէն, և խնդրեմք զերեսս քո։ Մի՛ յամօթ առներ զմեզ. այլ արա ընդ մեզ ըստ հեզութեան քում. և ըստ բազում ողորմութեան քում։ Եւ փրկեա զմեզ վասն զրանչելեաց քոց, և տուր փառս անուան քում Տէր։ Եւ յամօթ լիցին ամենեքեան ոյք ցուցանեն չարիս ծառայից քոց և ամաչեսցէն յամենայն բռնութենէ իւրեանց, և զօրութիւն նոցա խորտակեսցի։

Եւ ծանիցեն զի դու ես Տէր Աստուած միայն, և փառաւորեալ ի վերայ ամենայն տիեզերաց։ Եւ ոչ դադարէին որք արկին զնոսա սղատաւորք թագաւորին ի զհնոցն բորբոքելոյ, նաւթիւ և ձիւթով, և վշով և որթով։ Եւ ելանէր գիզանայր բոցն ի վերոյ քան զհընոցն ի քառասուն և յինն կանգուն։

Եւ շրջէր պատէր շուրջ զհնոցանն, և այրէր զորս գտանէր ի քաղդէացւոց անտի։ Եւ հրեշտակ Աստուծոյ էջ եկաց ընդ ազարիանսն ի հնոցի անդ, և թօթափեաց զբոց հրոյն ի հնոցէ անտի։ Եւ արար ի մէջ հնոցի իբրև զհովմ որ ցօղալին շնչիցէ. և ոչ տրամեցուցանէր և ոչ նեղէր զնոսա։ Յայնժամ երեքեանն իբրև ի միոջէ բերանոյ. օրհնէին և գովէին և փառաւոր առնէին զԱստուած և ասէին։

Օրհնեալ ես Տէր Աստուած հարցն մերոց, գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեանս և օրհնեալ է անուն սուրբ փառաց քոց. գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեանս։

Օրհնեալ ես ի տաճարի փառաց սրբութեան

քոյ. զովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեանս։

Օրհնեալ ես որ հայիս յանդունդս, և նստիս ի քերովբէս, զովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեանս։

Օրհնեալ ես ի վերայ աթոռոյ արքայութեան քոյ, զովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեանս։ Օրհնեալ ես ի վերայ հաստատութեան երկնից զովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեանս։

Օրհնեցէ՛ք ամենայն զորձք Տեառն զՏէր օրհնեցէք, և բարձր արարէ՛ք զնա յաւիտեան։

Օրհնեցէ՛ք երկինք զՏէր օրհնեցէք...

Օրհնեցէ՛ք հրեշտակք Տեառն զՏէր օրհնեցէք...

Օրհնեցէ՛ք ջուրք ամենայն ի վերոյ քան զերկինս զՏէր օրհնեցէք։

Օրհնեցէ՛ք ամենայն զօրութիւնք Տեառն զՏէր...

Օրհնեցէ՛ք արև և լուսին զՏէր...

Օրհնեցէ՛ք ամենայն աստեղք երկնից զՏէր...

Օրհնեցէ՛ք ամենայն անձրևք և ցօղք զՏէր...

Օրհնեցէ՛ք ամենայն հողմք զՏէր...

Օրհնեցէ՛ք հուր և տաղ զՏէր...

Օրհնեցէ՛ք ցուրտ և տօթ զՏէր...

Օրհնեցէ՛ք եղեամն և ձիւնարեր զՏէր...

Օրհնեցէ՛ք սառն և պարզ զՏէր...

Օրհնեցէ՛ք պաղ և ձիւն զՏէր օրհնեցէք...

Օրհնեցէ՛ք տիւք և գիշերք զՏէր...

Օրհնեցէ՛ք լոյս և խաւար զՏէր...

Օրհնեցէ՛ք ամպք և փայլատակունք զՏէր...

Օրհնեսցէ՛ք երկիր զՏէր...



Օրհնեցէ՛ք լերինք և բարձունք զՏէր...

Օրհնեցէ՛ք ամենայն բոյսք երկրի զՏէր...

Օրհնեցէ՛ք աղբիւրք զՏէր...

Օրհնեցէ՛ք ծովք և գետք զՏէր...

Օրհնեցէ՛ք կէտք և ամենայն կայտառք որք ի ջուրս զՏէր...

Օրհնեցէ՛ք թռչունք երկնից զՏէր...

Օրհնեցէ՛ք ամենայն գազանք և անասունք զՏէր...

Օրհնեցէ՛ք որդիք մարդկան զՏէր...

Օրհնեսցէ Իսրայէլ զՏէր օրհնեսցէ.

Օրհնեցէ՛ք քահանայք զՏէր...

Օրհնեցէ՛ք ծառայք Տեառն զՏէր...

Օրհնեցէ՛ք հոգիք և շունչք արդարոց զՏէր...

Օրհնեցէ՛ք սուրբք և խոնարք սրտիւք զՏէր...

Օրհնեսցէ՛ք անանիա՝ ազարիա՝ և միսայէլ զՏէր...

Օրհնեսցէ՛ք և բարձր արարէ՛ք զնա յաւիտեանս, զի փրկեաց զմեզ ի դժոխոց՝ և ի ձեռաց մահու ազատեցոյց զմեզ. և փրկեաց զմեզ ի հնոցէն. և ի միջոյ բորբոքեալ բոցոյս, և ի միջոյ հրոյս փրկեաց զմեզ։

Գոհացարուք զՏեառնէ՝ զի բաղցր է՝ զի յաւիտեան է ողորմ նորա։

Օրհնեսցէ՛ք ամենայն պաշտօնեայք Տեառն զԱստուածն աստուածոյ. օրհնեցէ՛ք և գոհացարուք զի յաւիտեան ողորմ նորա։

---

## Սրբոյ ծննդեան Ճրագալուցին։

Խորհուրդ մեծ և սքանչելի, որ յայսմ աւուր յայտնեցաւ, հովիւքն երգեն ընդ հրեշտակս, տան աւետիս աշխարհի։ Ծընաւ նոր արքայ ի բեթղեհեմ քաղաքի, որդիք մարդկան օրհնեցէք, զի վասն մեր մարմնացաւ։ Անբաւելին երկնի և երկրի ի խանձարուրս պատեցաւ, ոչ մեկնելով ի հօրէ, ի սուրբ այրին բազմեցաւ։

Այսօր ցնծան երկինք 'ի վերուստ մեծապայծառ աւետեաւք, և արարածք ամենայն զգեցան հանդերձ փրկութեան։ Այսօր յայրին ընծայեցաւ Քրիստոս որդին Աստուծոյ, և հրեղինաց բազմութիւնք յերկնից յերկիր վայր իջեալ։ Այսօր հովուացքն տեսեալ զարդարութեան արեգակն, և ընդ հրեշտակս երգէին փառք 'ի բարձունս Աստուծոյ։

'Ի հօրէ ծագեցար լուսաւորիչ զարարածս. արդարութեան արեգակն Տէր փառք քեզ։ Ծընար 'ի յայրին, ընծայեցար Բեթղեհեմ, արդարութեան արեգակն Տէր փառք քեզ։ Հովուաց յայտնեցար երկրպագեալդ 'ի մարդուց, արդարութեան արեգակն Տէր փառք քեզ։ Եւ մեք երկեսցուք որ 'ի կուսէն մարմնացար, արդարութեան արեգակն Տէր փառք քեզ... և։

---

4084



## Երգ ծննդեան Քրիստոսի։

Զամպարափայլ սրբոյ ծնիս, աւետիս,
'Ի միտս առցուք զիսորհուրդ բանիս, աւետիս,
Քանզի յերկնից Տէրն խոնարհի, աւետիս,
'Ի կոյս մօրէ այսօր ծնածի, աւետիս,
'Ի Բեթղեհէմ քաղաք Դաւթի, աւետիս,
'Ի գերեզմանն Եւայի, աւետիս։

—

Ստոյգ մի պայծառ յերկինս յայտնի, աւետիս,
Առաջնորդէ մոգուց գասի, աւետիս,
Առ որ եկին երեք աբքայ, աւետիս,
Ոսկի կընդրուկ բերին ընծայ, աւետիս,
Տեսին զՅիսուս մանուկ արդայ, աւետիս,
Բազմեալ 'ի գիրկս Մարիամայ, աւետիս։

—

Զուարթունք երկնից պար առնէին, աւետիս,
Զփառք 'ի բարձունս երգէին, աւետիս,
Զի զոր տեսին վկայեցին աւետիս,
Թէ բանն Աստուած էառ սրմին, աւետիս,
Հովիւքն ի ի յայրն ընթացին, աւետիս,
Զասքն հրաշիցն զարմացեալ, աւետիս։

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՀ-ՍՍՌ
Մ. Մաշտոցի անվան
Ս. ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

13. — Բացատրական ձեռնարկ «մանկութիւն» կոչուած պատկերազարդ գրքոյկի . . . . — 10
14. — Սկսթքներ Դանէլ մարգարէի գիրքը և Սուրբ Ծննդեան ճրագալուցի երգն . . . — 7
15. Ճալարբեկեանց Յ.—Հայոց լեզու երկրորդ տարի . . . — 30
16. — Սասունցի Դաւիթ Դիւցազն . . . . . — 20

ԳՏՆՈՒՄ ԵՆ Ի ՊԱՀԵՍՏ.

17. Վիլհելմ-Թէլ կամ Հելուետիայի ազատութիւնը—բանաստեղծական յորինուած Ֆլորիանի թարգմ. գաղղերէնից (սակաւաթիւ) . . — 40
18. Օլիվեր-Գոլդսմիթ—Վէքֆիլդի երեց, ֆրանսիականից թարգմ. Մ. Բուդաղեանց (սակաւաթիւ) . . 1 —
19. Բաֆֆի—Ո՞վ էր մեղաւոր . . — 20
20. Հոֆման, Ֆրանց—Հաւատարմութիւնը ամեն արկելքներին յաղթում է, թարգ. Յար. Առաքելեանց . 40
21. — Խաւարից դէպի լոյս թարգ. Յար. Առաքելեանց [սակաւ.] 40
22. Լէսսինգ—Նաթան իմաստուն. դրամատիկական, բանաստեղծութիւն 5 գործ. թարգմ. Հ. Բարխուդարեանց . . . . . — 60
23. Շիլլեր—Վիլհելմ Տէլլ—դրամա 5 գործ. թարգմ. Գէորգ Բարխուդարեանց . . . . 1 —

24. — Դոն Կարլոս. դրամատիկական բանաստեղծութիւն, 5 գործող. թարգմ. Դ. Բարխուդարեանց . 1 —

25. — Օրլեանի կոյսը, վիպասանական ողբերգութիւն թարգմ. Գ. Բարխուդարեանց . . . — 60

26 Վարդարան ի պէտս վարժութեան դեռահասակ մանկանց։ Աշխատասիրութեան երից երկու եղբարց Գ. և Ս. Սկանդարեանց և ընկերի նոցա պ. Ղահր. Մելիքեանց, թարգմանութ. մեծի մասին պարսկերէնէ — 60

27. Խատիսեանց Գարբ.—Սէր Հայ երիտասարդը ընծայ հատոր ա. . — 40

28. — Մանկավարժական խորհուրդածութիւններ մն. ա. . — 60

---

Բացի այս ցուցակը տպագրուում է մի ուրիշ ցուցակ հայերէն գրքերի, որոնք չեն գտնվում Տփխիսի միւս գրավաճառներում։

---

*Գինն է 7 կոպ.*

Քսանից աւել գնողներին 20% զեղչ։

781

0027364

787